Միրզաբէկլու, Սուլթան-Նուխի, Վարդանլու, Փաստառ և այլն և այլն, որոնցից առաջինները գտնուում են 4—8 վերստ հեռաւորութեան վրայ՝ Նիժի արևելեան կողմը, իսկ վերջինները դէպի հիւսիսային կողմը՝ 30—35 վերստ հեռաւորութեամբ։

Բ

ՈՒՏԻԱՑՈՑ ԵՐԿՐԻ ՕԴՆ ՈՒ ՋՈՒՐԸ

Ուտիացոց աշխարհի օդն առողջարար և ջուրն անուշահամ, բիւրեղի պէս պարզ ու վճիտ է լեռնոտ ու անտառային մասերում, ուր անթիւ սառնորակ աղբիւրներ և վտակներ են հոսում։ Իսկ դաշտային տափարակ մասերում, առաւելապէս Նիժ գիւղաքաղաքի շրջակայ տափաստաններում, շատ ու ճնաասակար է նրա օդն ու ջուրը, խայթող մոծակներով և միջատներով լի, տենդոտ և մալարիա վտանգաւոր հիւանդութեան բոյն։ Այս բանին նպաստում են մեծ մասամբ բրնձի անվերջ ու անծայր արտերը, դրանց մարդերում՝ կիզող արևի տակ ճնացած հոտած ու նեխած ջրերը, որոնք չորս կողմը մահաբեր թոյն են տարածում։

Բացի այս կորստաբեր հանգամանքից, կայ և մի ուրիշ արհեստական միջոց, որ կամաց-կամաց քայքայում ու կազմալուծում է ազգաբնակչութեանց ամբողջ կազմուածքը և ժամանակից